

Պ. Բեգիրյան

ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁԸ

Մեծ է այս կամ այն լեզվի բառերի ստուգաբանության նշանակությունը ինչպես այդ լեզվի պատմության, այնպես էլ այդ լեզվով խոսող ժողովրդի պատմության մեծ մնացած հարցերի լուսարանման գործում։ Հայտնի է, որ հայերենի արմատների, բառերի ստուգաբանությամբ զբաղվել են շատ լեզվաբաններ։ Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի բառերի ստուգաբանության բնագավառում անգնահատելի ծառայություն է մատուցել հանգուցյալ ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը, որի «Հայերեն արմատական բառարան»-ը վիթխարի նվաճում է հայագիտության և առհասարակ համեմատական լեզվաբանության համար։

Հայտնի է, որ Ն. Յա. Մառի, այսպես կոչված, «քառասոր» վերլուծության մեթոդը այս բնագավառում ևս լեզվաբանությանը ոչ մի օգուտ չբերեց, այլ, ընդհակառակը գիտական վերլուծությունը վիթխարիներով ստուգաբանական ձևաշարություններով՝ դրանով իսկ շփոթության մեջ գցեց լեզվաբանությունը։

Այժմ «մասնագիտ» կարելի է ասել, հաղթահարված է։ Սակայն և՛ Մառի «ստուգական» տիրապետության շրջանում, և՛ նրանից առաջ ու հետո, լեզվի բառապաշարի ստուգաբանական վերլուծությունների բնագավառում համարյա թե չօգտագործված է մնացել բառագիտության ամենակարևոր օղակներից մեկը՝ իմաստաբանությունը։ Լեզվի բառերի իմաստափոխության երևույթների հետազոտումը մեծ օգուտ կարող է տալ մինչև այժմ գեո չստուգաբանված բառերի ստուգաբանական վերլուծմանը։

\* \* \*

Բառիմաստի դարգացման այսպիսի մի երևույթ ընդհանուր է լեզուների մեջ. երբեմն մի լեզու մի ուրիշ լեզվից վերցնում է տվյալ ժողովրդի կյանքին հատուկ այս կամ այն երևույթն արտացոլող մի բառ և այդ բառը դործ է ածում նրա ոչ թե ընդհանուր իմաստով (այլ կերպ ասած, իմաստի ոչ այն ծավալով, ինչ ծավալով օգտագործվում է տվյալ լեզվի մեջ), այլ ավելի նեղ իմաստով։ Օրինակ՝ վրացերենի ազնավուր «ազնավական» (ընդհանրապես) բառը ուսերենում азнагур ձևով օգտագործվում է «վրացի ազնավական» իմաստով<sup>1</sup>, ադրբեջաներեն աղալար > ուս. ағалар բառը՝ «ադրբեջանական բուրժուա-կալվածատեր» իմաստով, Լատիներեն legio լեզեոն, զորքի միավոր, որը բաղկացած է 4200—6000 հետևակից և 300 հեծյալից՝ բառը հունարենում (λεγεων) և նրա միջոցով՝ հայերեն-

<sup>1</sup> Տե՛ս Հ. Անտոնյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 36։

նում (լեգէոն, լեգէոն) օգտագործվում էր ոչ թե ընդհանրապես «լեգեոն», այլ մասնավորապես ժողովմեակացի զինվորական բանակ<sup>1</sup> իմաստով: Արարերեն amīr-al-mūninīn «զուլա հաստացելոց» բառը հ.յ. ամիր ալ մումնիք կամ ամիր մումնիք ձևով՝ «արարների խալիֆան» իմաստով<sup>2</sup>, ֆրանսերեն empereur «կայսր» բառը միջին հայերենում անբուր, ումբուր, բմբուր, բնբուր, օնբուր ձևերով հատուկ է եղել ամիրայն և վրոպացի թագավորներին. հմմտ. ֆրանկաց ումբուրն ծանուցեալ և յունաց կայսրն զայս լուեալ<sup>3</sup>:

Նույն ոգով՝ պրս. gōr «գերեզման» > հ.յ. գոռ «մահմեդականի գերեզման», որից գոռել «մահմեդականի դիակը թաղել»<sup>4</sup>. պրս. danismand «գիտուն» > հ.յ. դանիշման «մահմեդական գիտուն», կարգացող, մոլլա<sup>5</sup> և այլն:

Հաշվի առնելով այս հանգամանքը, հնարավոր է դառնում որոշել ծագումը մի քանի արմատների. որոնք մինչև այժմ չեն ստուգարանված նույնիսկ Վերամատական բառարանում:

1. ԽԱԼԻՓ: Այս բառի մասին բառարանում կարգում ենք. «Մի տեսակ արարական ծագիկ է՝: Բառի բացատրությունը հենց ցույց է տալիս, որ բառն ինքն էլ պետք է արարական լինի: Եվ իրոք, բառս ծագում է աղաբերեն ٱلْهَالِكُ halūk բառից, որը պարագիտային մի բույսի անունն է. հ.յ. ճրագախոտ, ռուս. заразна, լատ. orobanche: Որպես պարագիտային բույս նա աճում է գերազանցապես արևածաղկի (արևածաղկի ճրագախոտ, orobanche cumana), կանեփի (կանեփի ճրագախոտ, orobanche ramosa), բոստանային կուլտուրաների (բոստանային ճրագախոտ, orobanche aegyptiaca). Ժխախոտի, օշինդրի և այլ արմատների վրա և նրանց հաշվին: Շատ հավանական է, որ հենց orobanche aegyptiaca-ն նշանակելու համար էլ արարերենից փոխ է առնված haluk > խալոկ բառը:

Արարերեն բառն իր հերթին կաղմված է ٱلْهَالِكُ halaka «ոչնչացնել» արմատից և ٱلْهَالِكُ u միջածանցներից. հմմտ. ռուս. заразна-заразить «վարակել»: Բույսերին բոս նրանց հիմնական հատկությունների կոչելը տարածված երևույթ է լեզվի մեջ: Հմմտ.

Աղվիս խրդուկ Սաս. բրբ. «գեղին հատիկներով բույս, որի սերմերից հայտնից ազվեսը խրտնում է»<sup>6</sup>:

Լվիռուղ, լվիռի Սաս. բրբ. «լվի խոտ, գեղին հատիկներով, որի հոտից լվերը սատկում են»<sup>8</sup>:

Չնշղզու սարուն Սաս. բրբ. «մի բույս, որ սապոնի<sup>9</sup> տեղ են օգտագործում»:

Անառ թ1. սապոն. 2. օճառախոտ, օշնան խոտը<sup>10</sup>:

<sup>1</sup> Արմ. բառ., հ. 2, էջ 1180:

<sup>2</sup> Նույն տեղում, հ. 1, էջ 223:

<sup>3</sup> Նույն տեղում, հ. 1, էջ 291—292:

<sup>4</sup> Նույն տեղում, հ. 2, էջ 275:

<sup>5</sup> Նույն տեղում, հ. 2, էջ 405:

<sup>6</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 324:

<sup>7</sup> Վ. Ա. Պետրյան, Սասունի բարբառը, Երևան, 1954, էջ 101:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>10</sup> Արմ. բառ., հ. 1, էջ 169:



2. **ԽԱԼԱՐ** կամ **ԽԱՏԱՐ**: Այս բառի մասին բառարանում ասված է. «Մի տեսակ արարական ծաղիկ է»<sup>1</sup>.

Բառս ծագում է արաբերեն **خضر** xudar «կանաչ» արմատից: Բառի փոխառմանը նախորդել է հենց արաբերենում նույն բառի՝ նեղ՝ մասնավորեցրած իմաստով գործածությունը (արարական մի բույսի անուն), որից հետո հայերենում վերցված է՝ նշանակելու համար «արարական ծաղիկը» (կամ խոտը, որը մեղ անհայտ է):

Որ իմաստի նման զարգացումը արաբերենում հնարավոր էր, կարելի է ապացուցել հետևյալ օրինակներով.

Նույն արմատից կազմված **خضر** xadrat բառը նշանակում է «1. կանաչությունը, 2. բուսականություն», իսկ **خضر و ب** xidarwat բառը՝ «1. մրգեղեն, 2. խոտ, բույս (!)». հմմտ. **الحضري** al-xadārī «բուսական, վեգետատիվ»:

Այս բոլորից ելնելով պետք է նշել նաև, որ բառիս խալար ձևը սխալ գրչություն է, որովհետև արաբ. **ض** α հնչյունը երբեք չէր կարող միջին հայերենում չ տալ, այլ պետք է տար դ (գրությունում՝ տ), ինչպես ցույց է տալիս, թեկուզ, հետևյալ օրինակը.

Արաբ. **قاضي** qadī «Շերիի մահմեդական օրինաց գատափոր» բառը հայերենում դարձել է դատի «գատափոր մահմեդականաց»<sup>2</sup> (ի միջի ալոց, այստեղ նույնպես կա օտար բառի իմաստի մասնավորեցում):

Չի կարելի ասել, իհարկե, թե փոխառնող լեզվի կրողները իրենց կյանքին անձանոթ երևույթների անունները բոլոր դեպքերում առնում են տվյալ լեզվից: Լինում է նաև, որ այս կամ այն երևույթին անուն են տալիս իրենց լեզվի միջոցներով: Այսպես, օրինակ՝ եղրդի բառը (բարբառներում՝ եղրդի, եղվրդի) նշանակում է «եգիպտական անուշահոտ ուռի, salix aegyptiaca», «ծառ նման ուռույձ յանջրգիս բուսեալ, յորոց ոստոց կաղմեն կողովս և ցախաւել և փարոց կզանց»: «Եգիպտական անուշահոտ ուռի» իմաստը մեզ մղում է ենթադրելու, որ բառը արաբական փոխառություն է, բայց իրականում բույսի անունը կազմված է հայերենի միջոցներով՝ եո (իւզ) արմատից (ծառից մեղրամոմի նման մի հյութ են ստանում) և -վրդի մասնիկից<sup>3</sup>:

Սակայն նման երևույթները լեզվի մեջ հազվագեղ են. գերակշռողն այն է, ինչի մասին խոսվեց վերևում:

Բառերի ձևա-իմաստային կողմերի համեմատությունն հիման վրա հնարավոր է գտնում գտնել նաև հայերեն մի քանի այլ բառերի ծագումը:

3. **ԱՍԼԻ** բառը, որ նշանակում է «արմատ կապած բույս», թէ՛ տալի լինի (որթն), այսինքն արմատաւոր և թէ՛ երկու տարւոյ պանդրած<sup>4</sup>, — Աճատյանի մոտ չստուգարանված բառերի շարքումն է: Բայց նա և՛ իր ձևով, և՛ իր իմաստով բացահայտորեն ցույց է տալիս, որ ինքր արաբերեն **أصلي** aslī «արմատական, սկզբնական, հիմնական, բնական» բառից է ծագում:

<sup>1</sup> Արմ. բառ., հ. 3, էջ 320:

<sup>2</sup> Նույն տեղում, հ. 4, էջ 533:

<sup>3</sup> Արմ. բառ., հ. 2, էջ 719—720. տես նաև Մխո. բառ., հ. 1, էջ 561—562:

<sup>4</sup> Արմ. բառ., հ. 1, էջ 541:

Խմաստի զարգացման համար հմմտ.

Թրք. աւրլ, աւլի «բնական, բուն, հիմնական արմատական», Սառ. բրբ. աւլու-շրնս «ծագումը, ջեղը», բուն (< ալլ. bun «հիմ, արմատ, ծագում, բուն, սկիզբ, ծայր, հիմնական») «1. ծառի իրանը, այն է արմատից վեր՝ մինչև ճյուղերի բաժանմունքը եղած մասը. 2. սանդուղքի երկու կողմի գերանները, որոնց վրա ամրացած են սասիճանները. 3. խարխալ, հիմ. 4. մեկի կամ մի քանի ծագումը, նախապատճառը, սկիզբը», արմատ, արմատակն բառերի զանազան հարակից խմաստները և այլն:

4. ԱԽՐԻԶԱՆ: Այս բառի մասին էլ բառարանում ասված է. «Մի տեսակ անուշահոտ և զեղեցիկ ծաղիկ է»:

Բառը փոխ է առնված արաբ. الحرنج al-xariza բառից, որով կոչվում է աղային վայրերում (օրինակ՝ Գարմիր ծովի ափին) աճող մի բույս, որն ունի ուլունքաձև տերևներ, լատ. arthrocnemum:

Արաբերեն բառն էլ ծագում է خرز xaraza «ծակել, ճեղքել, դալիկունել ևն» արմատից, որից կազմված է خرز xaraz «զնդիկ, համրիչ, ուլունքաձևատիկ» բառը: Հենց այս վերջինիս նմանությամբ էլ բույսն ստացել է այդ անունը: Խմաստի զարգացման համար հմմտ. ուլն, ուլունք բառից Ախց. բրբ. հլուն «1. ուլունք. 2. որոտի մեծությամբ կտոր կամ կաթիլ (շաքար, քրտինք)», բոժոժ «1. զանգակ. 2. մետաքսի բոժոժ. 3. զանգականման ծաղիկ», արծվաճանկ «մի տեսակ բժշկական խոտ», վր. արծիվա (< հյ. արծիւ բառից) «արծվախոտ, aquilina»<sup>5</sup>, Կր. բրբ. դավի զանգուլակ «զանգակաձև զեղնագույն վայրի անհոտ խոտ»<sup>6</sup>:

5. ԽԱԼԼԷ (Արմ. բառ., հ. 3, էջ 321) կամ ԴԱԼԼԷ (նույն տեղում, հ. 4, էջ 528): Այս բառի մասին բառարանում ասված է. «Մի տեսակ հին նավ», «ցոկանավ»: Աճառյանն այն կապեց միջ. հուն. γάλεα միջ. լատ. galea բառի հետ, միաժամանակ իրավացիորեն ենթադրելով, որ դա անապաման արաբական փոխառություն է<sup>7</sup>:

Հետազոտությունը ցույց տվեց, որ հայերեն բառը փոխ է առնված արաբ. خلية xaliya բառից, որը բացի «մեծ նավ» նշանակությունից ունի նաև «1. տիրոջ կողմից բաց թողնված ուղտ. 2. փխր. ամուսնու կողմից բաց թողնված կին և 3. մեղվի փեթակ» իմաստները: Արաբերեն այդ բառը «մեծ նավ» իմաստով անցել է նաև Լվրոպական լեզուներին:

6. Ալմանակ կամ ալմանախ: Այս բառը բառարանում համարվում է ծագումով անհայտ, միաժամանակ նշվում է, որ ոմանք այն հանգեցնում են իսպանական արաբ. al-manakli բառին, ոմանք էլ՝ Լեզիպտական հունարերին<sup>8</sup>:

<sup>1</sup> Վ. Պետյան, Սասունի բրբ., էջ 101:

<sup>2</sup> Արմ. բառ., հ. 1, էջ 1197—1202:

<sup>3</sup> Արմ. բառ., հ. 1, էջ 70:

<sup>4</sup> Նույն տեղում, հ. 5, էջ 619, նաև Հ. Աճառյան, Հայերեն զուստական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 661:

<sup>5</sup> Արմ. բառ., հ. 1, էջ էջ 201 և 691:

<sup>6</sup> Հ. Մկրչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 131:

<sup>7</sup> Տես Արմ. բառ., հ. 3, էջ 321:

<sup>8</sup> Նույն տեղում, հ. 1, էջ 55:



Հենց իր՝ Աճառյանի բերած այն վկայությունը, թե Եվսերիոսը «այլ անունով կոչում է «եգիպտական օրացույցները», — ցույց է տալիս, որ այլ բառը, վերջին հաշվով, եգիպտական, արարական ծագում ունի։ Եվ հիրավի, դա արաբերեն *مناخ* manax «կլիմա» արմատից է։ Իմաստի նման զարգացումը մեզ համար միանգամայն կպարզվի, եթե նկատի ունենանք, որ հնում կլիմա (հուն. κλίμα) նշանակել է բրածանմունք, երկրամաս, աշխարհադրական դոտի» (հունարենում), «երկրի կամ երկնքի բրածանմունք», «օդի բարեխառնություն» (հայերենում)<sup>1</sup>, իսկ հնագույն օրացույցների բովանդակությունը հենց աշխարհադրական-աստղագիտական էր։ Ի դեպ, սլավոնախ բառի ներկա իմաստի մեջ էլ պահպանվում է օրացույցը նշանակությունը՝ երանդը. այդ բառն այժմ դործ է տնկում «մի որոշակի ժամանակի դրական ստեղծագործությունների ժողովածու» իմաստով<sup>2</sup>։

7. Թռչունների (և ոչ միայն թռչունների) իրենց այս կամ այն հատկության անունով, կամ թե չէ բոլոր այս կամ այն առարկային իրենց նմանություն կոչելը շատ տարածված ու սովորական երևույթ է լեզվի մեջ։ Օրինակ՝ հոպոպը Համշենի բարրառում կոչվում է սանտրիկ<sup>3</sup>՝ ըստ իր կատարի՝ սանրի հետ ունեցած արտաքին նմանության (հիշեցեք նաև Հովհ. Թումանյանի մշակած հայտնի «Անիծած հարսը հեքիաթը»)։ Նույն հիմունքով Սասունի բարրառում մանգոթեիկ (մանգաղթեիկ) անունն է կրում սև, ծիծեռնակի նման մի թռչուն, որ ճախրում է առափոտյան գոլ օդին և երեկոյան<sup>4</sup>, հայերենի մի շարք բարրառներում կայծոռիկ կամ կայծուռիկ անունը տրվում է Վիոսուռա, լուսատուիկ, մայիսյան հրավառ ճճիք՝ կոչված կենդանուն՝ դարձյալ նույն հիմունքով։

(Լինում է նաև հակառակ երևույթը, երբ մի թռչունի (կենդանու) անունը նրա այս կամ այն հատկության գույնգույնում անցնում է մարդուն հատուկ այս կամ այն երևույթին, օր. կաքաւ «1. կաքավ թռչունը. 2. մի տեսակ պար», որից կաքաւել «պարել, ոտոտտել», հատկապես «լավ՝ գեղեցիկ ու ճկուն պարել»)։

Ահա ելնելով վերոհիշյալից, չի կարելի *ԿԵՐԿԵՐ* «մի տեսակ թռչուն՝ անդուծ» բառը գիտել որպես առանձին բառ, ինչպես այդ արված է Աճառյանի մոտ<sup>7</sup>, այլ այն պետք է հանդեսնել կերկերիլ «կոկորդը չորանալ, ձայնը կտրվի» բառին (որն իր հերթին կազմված է կեր, արմատի կրկնությունով)։

Այս պնդումը հիմնավորվում է նրանով, որ հիշյալ կերկեր թռչունը (հյ. սև փարփար, ռուս. лысуха, լատ. fulica atra) իրոք այդպիսի՝ չոր և բերկերուն ձայն ունի, որը կարելի է մոտավորապես վերարտադրել «տիկ-տիկ» հնչյուններով։

<sup>1</sup> Տես Արմ. բառ., հ. 3, էջ 225։

<sup>2</sup> Արաբերեն բառերը և նրանց բացատրությունը գտնելու գործում մեզ մեծապես սփանդակել է Հայկական ՍՍՌ ԳԱ Գիտության ինստիտուտի աշխատակից Ս. Էքմեքչյանը։

<sup>3</sup> Տես Հ. Աճառյան, Քննություն Համշենի բրբ., Երևան, 1947, էջ 264։

<sup>4</sup> Վ. Պետրյան, Սասունի բրբ., էջ 144։

<sup>5</sup> Արմ. բառ., հ. 3, էջ 233։

<sup>6</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 1112։

<sup>7</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 1156։

8. Հաւարք: Այս բառը նույնպէս չի ոտաւղարանւում: Գննությունը պարզում է, որ հաւարք «ժողով»<sup>1</sup>, որից հաւարքել «ժողովել» բառը արմատական չէ, այլ բուն հայկական բառ է, ծագում է հաւ || յաւ «ծայր» (հնիւ. rau-)<sup>2</sup> արմատից և -արք մինչեւ այժմ անհայտ վերջածանցից: -արք վերջածանցը համարաբար նեղեմբոսական -ko- վերջածանցն է, որի համապատասխան ձևերն են՝ -ek-, -ka-, օր. սկր. mariva-kah «մարդ», հուն. -αἰμαίραζ «պատանի», հին.-սլաւ. новакъ, кратъ-къ, нно-къ<sup>3</sup>:

Որ «ծայր» նշանակությունն ունեցող բառը կարող էր զարգանալ և «ամփոփ(ել)» իմաստի վրայով ի վերջո հանգել «ժողով(ել)» իմաստին, — ապացուցում են հետևյալ օրինակները.

Ննիւ. բրբ. ծայրե ծայր ելլել «վերջացնել, ամբողջացնել»<sup>4</sup>:

Ղրբ. հավարք զհոկիկ, ամփոփ», որից՝ իրան հավարք պահել «իրեն զսպում պահել» — բնձ. բրբ.<sup>5</sup>:

Լադ. cod, ( > յ. հոբ) «վերջացնել, սպառել, պարպել, հետեւել»:

Ծայրե ծայր «մի ծայրից մինչև մյուս ծայրը, լրիվ, ամբողջապէս»: Ծայրաքաղ առնել «հատրնաիր համարել, ծաղկաքաղ անել, համատուտել՝ էական մասերը քաղելով»<sup>6</sup>:

Ծայրը ծայրին բերել «ամբողջացնել, համարել»:

Կր. Ախց. հավրիլ «տեղափոխել, պարունակել, պարփակել», ամփոփելով:

Իսկ ամենապերճախոս ապացույցը՝

Հմշ. բրբ. տակծայրիլ «կերակրի թանձր մասը տակը հատիլ<sup>8</sup>, համարելով:

Իմաստի զարգացման համար հմմտ. նաև.

Ամփոփ «ժողովում, համար, մեկնակում»<sup>9</sup>:

Եզր «1. ծայր. 2. մասանդում», օր. արամաբանական տերմինոլոգիայի մեջ տալում է համարաբանության (!) — սիլլոգիզմի — երրորդ եզրը (այսինքն՝ մասանդումը)՝ . նույն եզր արմատից՝ եզրափակել «1. կորակացնել. 2. ամփոփել»:

Գումարիլ «1. համարել. 2. ամփոփել, կուշ դալ, կծկել»<sup>10</sup>:

Սփարիլ «ամփոփել, կծկել, համարելով պահտել»:

Կծկել «ամփոփել»<sup>12</sup>:

Ե ուլուլել Կր. «ծայրերը իրար բերելով համարել (!), ոլորել»<sup>13</sup>:

<sup>1</sup> Արմ. բառ., հ. 4, էջ 211.

<sup>2</sup> A. Meïe, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, стр. 280.

<sup>3</sup> Հ. Անադյան, Գլոս. բառ., էջ 507:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 605:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 728:

<sup>6</sup> Մլխս. բառ., հ. 2, էջ 325—326:

<sup>7</sup> Արմ. բառ., հ. 4, էջ 225:

<sup>8</sup> Հ. Անադյան, Քննություն Հմշ. բրբ., էջ 265:

<sup>9</sup> Արմ. բառ., գ. 1, էջ 238:

<sup>10</sup> Տե՛ս Մլխս. բառ., հ. 1, էջ 551:

<sup>11</sup> Տե՛ս Արմ. բառ., հ. 2, էջ 303, 308:

<sup>12</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 814, 1228:

<sup>13</sup> Հ. Անադյան, Կարճ բարբառ, էջ 132:



Պըլովել Սաս. բրբ. փաթաթել, հավաքել<sup>1</sup>:

9. Կնձիթ, նույնպես չստուգաբանված բառերից է: Նրա մասին բա-  
նարանում կարդում ենք. «Խողի՝ վարաղի քիթ», «փղի պատիճ» (որից,  
բնդլայնամամբ, կնձթեղ քիթք մեծ»<sup>2</sup>:

Այս բառն էլ արմատական չէ, այլ կազմված է պարսկերենից փո-  
խառյալ կինն կամ կինջ փարաղ, արու վայրի խող» (<պարսկ. kinj փիթ-  
խարի փիղ», որ և kinjal, արմատից (այստեղից՝ կննադէմ փողի կերպա-  
րանք ունեցող»<sup>3</sup> (և -իթ վաղուց մեռած վերջածանցից):

Որ փող» իմաստն արտահայտող արմատից իրոք կարող էր կազմվել  
«խողի քիթ», նմանություն մը՝ «փղի քիթ» նշանակությամբ բառը, — ապա-  
ցուցվում է հետևյալ բայով:

Կննանալ (կինն արմատից) «նպարտանալ ամբարտապանի» (այսինքն՝  
սիթը բարձր պահել): Իմաստի դարգացման համար հմտ.:

Մեծ քիթ գոռոզ: Քիթը մեծնալ «նպարտանալ, փքել», որից՝ Շատ  
է քիթդ մեծցել, բարև էլ չես ուզում տալ:

Քիթը տնկել «մեծամտել, գոռոզանալ»:

Քրենն ընկնողը հազար կտոր կլինի (առած) «չատ հպարտ՝ մեծամիտ՝  
ամբարտապան է»<sup>4</sup>:

Այս բոլորը ցույց է տալիս, որ կննիթ բառի արմատը կինջ, կինն է,  
իսկ -իթ-ը վերջածանց է, ունի մոտավորապես հայ. -ի (խոզի, փղի) վերջ-  
ածանցի իմաստը (սրա համար հմտ. նաև ստորև բերված օրինակները):  
Շատ հավանական է, որ դա լինի նշեկվողական -ել- (-ed-) վերջածանցը,  
որը շատ է տարածված եվրոպական լեզուներում և ենթակայական դեր-  
այի իմաստ ունեցող բառեր է կազմում:

Հայերենում -իթ (-իտ, -իդ) վերջածանցի գոյություն մասին է վկայում  
նաև ծղրիդ կամ ծղրիթ կամ ծղրիտ բառը, որը կազմված է ծղր- բնահնչյուն  
արմատից և -իդ (-իթ, -իտ) վերջածանցից: Ծղր- արմատից է ծղրալ ճգողուի,  
ծղրիդի ձայն հանել» բայը, իսկ -տ- բաղմապատկական կերպածանցի օդ-  
նությամբ՝ բարբառային ծղրալ ճգալ, բղավել, ծղրաւն, ծղրաոց, ծղր-  
աւցնել բայերը:

Այդ նույն -իթ (-իդ, -իտ) վերջածանցն է, որ իրեն զգալ է տալիս  
լեհահայոց բարբառի հետևյալ բառերի մեջ. կթիտ > գրթիդ «մեջը կաթ կթե-  
լու դուլը» (կթելու դուլ), վեստիդ՝ (vestit) «նշանավոր, երեկի, հոգակա-  
վոր» (հավանաբար կազմված է սլավոնական ВЕСТЬ «1. լուր. 2. համբավ»  
արմատից և հայերեն հիշյալ վերջածանցից):

10. Լեզվի մեջ տարածված երևույթ է, երբ նյութի անունը իմաստի  
բնդլայնամամբ անցնում է նրանից պատրաստված արդյունքին: Այսպես,  
օրինակ՝

<sup>1</sup> Վ. Պետյան, Սասունի բարբառը, էջ 152:

<sup>2</sup> Արմ. բառ., հ. 3, էջ 1256—1257:

<sup>3</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 1197—1198:

<sup>4</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 1198:

<sup>5</sup> Տես Մխ. բառ., հ. 4, էջ 573—574:

<sup>6</sup> Տես Ա. Մեյի վերոհիշյալ աշխատությունը, էջ 278—279:

<sup>7</sup> Արմ. բառ., հ. 3, էջ 794 և Մխ. բառ., հ. 3, էջ 344:

<sup>8</sup> Տես Հ. Անտոյան, Քննություն Աստիալի բարբառի, Երևան, 1953, էջ 192:

Պղինձ թ1. մետաղը. 2. կաթսա. նույն նշանակություններն ունի նաև Հմշ. բրբ. բղինձ բառը, իսկ հունգարահայոց բարբառում բղինձ նշանակում է սարգուկ (հմտ. անդլ. iron թ1. երկաթ. 2. արգուկ, որից՝ to iron սարգուկել):

Ալապատր թ1. մի տեսակ թափանցիկ մարմարիոն կամ կրային քար. 2. նույն նյութով շինված աման (շիշ)՝ անուշահոտություներ կամ մյուսոն պահելու համար<sup>1</sup>:

Վր. (հայերենից փոխառյալ) ծումծումա կամ ծումծութայ կամ ծունծութայ թ1. ծծումբ. 2. լուցկի<sup>2</sup>: Հմտ. բարբառներում քուքուրդ (ք) թ1. ծծումբ. 2. լուցկի<sup>3</sup>:

Հաշվի առնելով այս երևույթը, հնարավոր է գտնել ԾՈՒՓ միջին հայերենից ավանդված և մինչ այժմ չստուգարանված բառի ծագումը:

Այս բառի մասին բառարանում ասված է. «Պտուկ, հողե (կալե) աման»<sup>4</sup>:

Բառը ծագում է հայերեն (խաղերենից փոխառյալ) ծեփ արմատից և ներկայացնում է նրա հնչյունափոխված ձևը: Հմտ. բարբառներում.

Մափ Ախց Ախք. Բյութ. Ձենկիլերի, Տրապիզոնի, Քղիի բրբ. «պտուկ» (բստ ՆՀԻ «տափակ և շրթնավոր կճուճ»):

Մափիկ Կյուրիների, Քղիի բրբ. «հողե աման մըն է՝ պտուկեն ավելի մեծ, ուխակեն ավելի փոքր»<sup>5</sup>:

Որ «ծափ» խմաստն արտահայտող բառից կարող էր առաջանալ «կալե աման» նշանակություներ ունեցող բառը (նկատի ունեցե՛ք, որ հնում ծեփելու սովորական նյութը կալն էր, նաև այն, որ ծեփելու և կալե աման պատրաստելու գործողությունները որոշ չափով իրար նման են), — վկայում է 'Լարարադի բարբառի ծրէփ բառը, որը նշանակում է թ1. ծեփելու նյութ. 2. կալից պատրաստած, բայց դեռ չթրծած աման. 3. ընդլայնամբ՝ աման-համան<sup>6</sup>:

Այժմ տեսնենք, թե ե՞տ հնչյունափոխությունը հատուկ է եղել միջին հայերենի հիմքում ընկած Կիլիկիայի բարբառին, թե ոչ:

Փաստերը յույց են տալիս, որ հատուկ է եղել: Հայտնի է, որ Կիլիկիայի բարբառի հիմնական խոսվածքներն են Ջեյթունի, Մարաշի և Հաճընի բարբառները: Այդ երեք բարբառներում էլ կա ե՞տ հնչյունափոխությունը:

Հմտ. հախ ունես՝ Ջեյթ. բրբ. հոխ ունես «խրավունք ունես»<sup>7</sup>:

Տանեմ՝ Մարաշի բրբ. դանամ<sup>6</sup>:

Ձևոք՝ Հաճընի » ծառ,

Եղբայր » » ախպայ,

Կերթար » » գաշթո<sup>7</sup>:

Ոչ միայն Կիլիկիայի, այլև Վերջ ճյուղի համարյա բոլոր բարբառներին հատուկ է եղել ե՞տ հնչյունափոխությունը: Հմտ.

<sup>1</sup> Արմ. բառ., հ. 1, էջ 46:

<sup>2</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 791:

<sup>3</sup> Նույն տեղում, հ. 3, էջ 756:

<sup>4</sup> Հ. Անառյան, Գլխ. բառ., էջ 510:

<sup>5</sup> Տես Ար. 'Լարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1954, էջ 430:

<sup>6</sup> Ար. 'Լարիբյան, Հայ բարբառագիտ., էջ 105:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 97, 98, 99, 104:



Ձեռք > Պլ. բրբ. ձառք,  
 եղբայր > Պլ. » ասթար<sup>1</sup>,  
 Եղբորդի > Հմշ. բրբ. ասթորոշդի<sup>2</sup>,  
 Մեծ > Մալաթիայի բրբ. մանձ,  
 Իեռ > » » փառ<sup>3</sup>,  
 Եղեր > Բեյլանի բրբ. աղեր,  
 չեղա > » » չաղո<sup>4</sup>,  
 Ձեռք > Սվեդիայի բրբ. ծառք<sup>5</sup>,

Ամենից բնորոշն այս է, որ բոլոր այն բարբառները, որոնք ունեն ծափ և նույն արմատից բառեր, ունեն նաև և > ա հնչյունափոխություն. այդ թվում նաև՝ Բյութանիայի = Նիկոմիդիայի, Տրապիզոնի (որը մոտ է Համշենին) բարբառները:

11. Ձեղուն: Այս բառը նույնպես չի ստուգաբանված:

Իմաստի համարյա թե նույնպիսի ընդլայնման արդյունք է այս բառի կազմումը բուն հայկական ձող (հնդեվր. ց'hol) «1. ձող, փայտ. 2. ծառի երկար ճյուղ, բուն»<sup>6</sup> արմատից:

Իմաստի անցումը տեղի է ունեցել ձող բառի «գերան» նշանակությամբ վրայով: Հմմտ. Հճ. ձող «գերան»<sup>8</sup>, Երկ. Վն. ձողի «1. ձող, փայտ. 2. Երկ. մահակ, հաստ փայտ»<sup>9</sup>, \*ձողհառի > Մեղրու բրբ. ձղղհար է բարդի ծառի մի տեսակը<sup>10</sup>:

Ձեղուն բառը, մեծ հավանականությամբ, ներկայացնում է ձող արմատի հոգնակի ուղղական ձևը (կարող է նաև -ուս վերջածանցով կազմված լինել): Որպես ապացույց հմմտ. հնից վկայված ձողունք «նույն նշ.», ինչպես նաև ձողիք «ձողերով հյուսված ծածկոց» (!) բառերը<sup>11</sup>:

Որ ձեղուն բառը կազմված է ձող արմատից, վկայում է նաև Ակնո բարբառի ձողունք նույնիմաստ բառի գոյությունը<sup>12</sup>, իմաստի նման անցման զրգապատճառներից մեկն էլ, գուցե և հենց հիմնականը, այն է, որ առաստաղի գերանը կատարում է ամբողջ կտուրի հենարանի դեր և որպես հիմնական փակտոր իր անունը տվել է ամբողջ առաստաղին: Իմաստի զարգացման համար հմմտ.

Ակոս «արորի քաշած գիծը, փոսը» > Սլմ. բրբ. գութանին լծված ամուլի ձախ եզր»<sup>13</sup> (որը, ինչպես հայտնի է, հիմնական ծանրությունը վերցնում է իր վրա և քայլում է ակոսի միջով):

Առնձ «1. երկար ու հաստ գերան, որի վրա նստած է սայլը և որի

<sup>1</sup> Առ. Ղառիբյան, Հայ բարբառագիտ., էջ 389:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 406:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 413:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 423:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 431:

<sup>6</sup> ՏԵՍ Հ. Անառյան, Գվո. բառ., էջ 35 և 32:

<sup>7</sup> Արմ. բառ., հ. 4, էջ 509-510:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Հ. Անառյան, Գվո. բառ., էջ 692:

<sup>10</sup> Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 278:

<sup>11</sup> Արմ. բառ., հ. 4, էջ 509:

<sup>12</sup> Նույն տեղում, հ. 4, էջ 480, նաև Գվո. բառ., էջ 692:

<sup>13</sup> Արմ. բառ., հ. 1, էջ 98:

ծայրից կապվում են լուծն ու եզր. 2. առաստաղի մեջտեղի մեծ գերանը»։ Աճառ ճառաստաղ, առիք, ոճոռք» կամ ճառաստաղի մանր գերանները»։

Առիք Ասլանբեկի, Արր. Խոռ. Կր. Մշ. Ողմ. Չարսանճագի, Վն. բրբ. առէք ննխ. բրբ. ճձեղուն, առաստաղ, մանավանդ գերաններով» (!)։

Բարդի (Աճառյանի մոտ՝ բարաի) «1. մի բարձր ծառ է. 2. Եվդ. շինվածանյութի փայտ՝ որոնք բնդհանրապես բարդի ծառից կտրված են լինում. 3. Թավրիդի թրք. բարբառով՝ pardū» կտուրների վրա հաստ գերանների հակառակ գիրքով գրված բարակ փայտերը՝ որոնք սովորաբար բարդիի ճյուղերից են լինում և որոնց վրա լցնում են հողը»։ այս բառը ետ առնելով եղել Ղրբ. փարդու ճկտուրի վրա հաստառված այն հաստ գերանները՝ որոնց վրա լցնում են հողը»։

Կոճ «1. ջարգել, կտրուել. 2. ճյուղերը կտրված ծառի բուն. 3. գերան > «գրանդի» > խաջ. բրբ. ճշենքի քիվ» (!)։

Իմաստի զարգացման համար հմմտ. նաև. լտ. trabs «1. գերան. 2. տուն. 3. զուգորդմամբ՝ նավ»։

Այժմ մնում է պարզել, թե օրինաչափակա՞ն է եղել արդյոք ո > և հնչյունափոխությունը հայերենում։ Փաստերը ցույց են տալիս, որ ո > և (և հակառակ) հնչյունափոխությունը հայերենի հնագույն վիճակում եղել է միանգամայն կայուն և կանոնավոր գործող օրինաչափություն. այդ և նման այլ հնչյունափոխությունների հետևանքով հայերենում այժմ ունենք նույն արմատից կազմված և իրարից արտաքուստ հեռացած «բառափնջեր» օրինակ՝

Հեղ (հնգել. pel-) — ող (pol-, արմատի կրկնությունով՝ ողող) հալ (pl-)։

Լող (հնգել. lel-) — լեղ — լոյղ — լուղ — լիւղ։

Ճիւղ — ճիղ — ճող — ճեղ։

Կոր — կեռ։

Հետ (հնգել. pedom — ոտն — յետ — ետ)։

Ո > է հնչյունափոխությունը խորթ չէ նաև բարբառներին։ Հմմտ.

Ջորի > Աղ. բրբ. ջէրի.

ճոգի > » » հէգի.

ոչխար > Աղ. բրբ. էխչար։

Հաճրնի բարբառում ո հնչյունը վ-ից առաջ օրինաչափորեն է է դառնում, օր.

Ծով > ձէվ, ծառով — ձարէվ և այլն։

Գորտ > Ղրբ. բրբ. կէպրնուկ։

Կնոջ > Հմշ. բրբ. գնէչ<sup>1</sup>։

\* \* \*

Այս ամբողջ շարադրվածք էրբեք հավակնություն չունի վերը նշված հայերեն բառերի սարսույշ ստուգաբանությունը տալու. նա մի նպատակ է հետապնդում, այն է՝ հայերենի բառապաշարի ուսումնասիրությունը զրազվող լեզվաբանների ուշադրությունը հրավիրել մի մոռացված հանգամանքի՝ բառերի ստուգաբանական վերլուծություն գործում իմաստափոխություն էրկույթների, օրենքների հաշվառման խիստ կարևոր գերի վրա։

<sup>1</sup> Այս էջի օրինակները վերցված են Արմ. բառ.-ից, Գվո. բառ.-ից և «Հայ բարբառագրա.»-ից։